ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 1

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան

« 07 » հունվարի 2026թ.

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունը, ի դեմս ՀՀ ներքին գործերի նախարարության գլխավոր քարտուղար Արա Ֆիդանյանի (այսուհետ՝ Նախարարություն), որը գործում է կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Տեսալուսանկարահանող էլեկտրոնային համակարգերի կառավարման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս տնօրեն Ա. Ավետիսյանի (այսուհետ՝ Կազմակերպություն), որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի N 1910-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում), «**1234. Ներքին գործերի նախարարության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումներ, մոնիտորինգ և վերահսկողություն**» ծրագրի իրականացման նպատակով կնքեցին սույն Պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով Նախարարությունը պարտավորվում է դրամաշնորհային ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր, Պայմանագրի հավելված N3) իրականացման նպատակով Պայմանագրի 5.1 կետով սահմանված կարգով Կազմակերպությանը հատկացնել Որոշմամբ նախատեսված՝ գումարը 3,082,000,000 (երեք միլիարդ ութսուներկու միլիոն) ՀՀ դրամ (ներառյալ՝ ԱԱՀ-ն), իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ Կազմակերպության կողմից իրականացվելիք Միջոցառումները (այսուհետ՝ Միջոցառումներ) ներկայացված են Պայմանագրի հավելված N1-ում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Նախարարությունն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության միջոցով) ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. Որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ՝ Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում չի իրականացվելու,

բ. Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված առանձին Միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. Պայմանագիրն << օրենսդրությամբ կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված Միջոցառման արդյունքը Նախարարության կողմից ընդունվելուց հետո պահանջելու համապատասխան վճարման ենթակա գումարը:

2.3. Նախարարությունը պարտավոր է՝

2.3.1. Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը.

2.3.2. կատարել Ծրագրի (առանձին Միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել Ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4.իրականացված Միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված Միջոցառումը համապատասխանում է Ծրագրի և Պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.3.5 Պայմանագրի կնքումից հետո 3-օրյա ժամկետում Կազմակերպության կողմից դրամաշնորհ ստանալու համար նախատեսված Ծրագիրը, այնուհետև, Ծրագրի կատարման վերաբերյալ ներկայացված հաշվետվությունը ընդունելուց հետո 3-օրյա ժամկետում հրապարակել իր պաշտոնական ինտերնետային կայքում:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել Ծրագրի շրջանակներում Նախարարության կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և (կամ) Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել Նախարարության կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4.Պայմանագրով սահմանված կարգով Նախարարություն ներկայացնել Միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ Ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.5.Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Նախարարության հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. Նախարարության կողմից առանձին Միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ Նախարարության կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան.

2.4.8. Պայմանագրով սահմանված Միջոցառումների տարեկան արդյունքները թերակատարելու դեպքում, դրա արդյունքում առաջացած գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ մինչև տվյալ բյուջետային տարվա նախավերջին աշխատանքային օրը.

2.4.9. Պայմանագրով նախատեսված Միջոցառումների տարեկան արդյունքներն ընդունվելուց հետո առաջացած տնտեսումները (խնայողությունները) Կազմակերպությունը վերադարձնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ արդյունքն ընդունվելուն հաջորդող տասը աշխատանքային օրվա ընթացքում, ոչ ուշ, քան մինչև 2027 թվականի հունվարի 24-ը:

Ընդ որում՝ սույն պարբերությամբ սահմանված Պայմանը նախատեսվում է նաև տվյալ բյուջետային տարվա ընթացքում կնքվելիք Պայմանագրերում:

3. Մոնիթորինգը

3.1. Նախարարությունը Ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Նախարարության և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Նախարարությունը ցանկացած ժամանակ կարող է Ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Պայմանագրի արդյունքի հանձնման և ընդունման կարգը

4.1 Պայմանագրի արդյունքն ընդունվում է Նախարարության կողմից լիազորված պատասխանատու ստորաբաժման (այսուհետ՝ Պատասխանատու ստորաբաժանում) և Կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ **(հավելված N 4)**:

Պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման համար յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 5 աշխատանքային օրվա ընթացքում ներառյալ Կազմակերպությունը Պատասխանատու ստորաբաժանմանն է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման ակտը և դրամաշնորհային հաշվետվությունը:

4.2 Եթե իրականացված Միջոցառումը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին, Պատասխանատու ստորաբաժանումը Պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված մինչև 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և Կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4.3 Եթե իրականացված Միջոցառումը կամ դրա մի մասը չի համապատասխանում Պայմանագրի պայմաններին, ապա Պատասխանատու ստորաբաժանումը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և Պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում Կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատասխանատու ստորաբաժանումը ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները և Կազմակերպության նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե Պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատասխանատու ստորաբաժանումը չի ընդունում Պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված Միջոցառումը համարվում է ընդունված և Պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատասխանատու ստորաբաժանումը Կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են կանխավճարային սկզբունքով՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով **(հավելված N 2)** նախատեսված չափերով և եռամսյակային համամասնությամբ: Եթե այդ եռամսյակում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է տվյալ եռամսյակի առաջին 30 աշխատանքային օրվա ընթացքում:

5.2 Կանխավճարի մարումն իրականացվում է հաստատված հանձնման-ընդունման ակտերի հիման վրա, կատարված վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1 Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում Պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2 Պայմանագրի N 3 հավելվածում նշված Ծրագրին չհամապատասխանող պարտավորություն իրականացնելու յուրաքանչյուր դեպքում Կազմակերպությունից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքը հաշվարկվում է նաև Պայմանագիրը սահմանված ժամկետներում կատարելու, սակայն Նախարարության կողմից չընդունվելու, ինչպես նաև հաշվետվությունները Պայմանագրով սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքերում:

6.3 Պայմանագրով նախատեսված Ծրագրի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կազմակերպությունից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ Պայմանագրի չկատարված մասի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Միջոցառման իրականացման արդյունքում Կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ:

Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ Պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

6.5 Նախարարության կողմից Պայմանագրի 4.1 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Կազմակերպության նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց Պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված Կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման Պայման է հանդիսանում Պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված Ծրագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը (**հավելված N 3**):

9.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ մինչև Պայմանագրի կնքումը, Պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Նախարարությունը միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում՝ Նախարարությունը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Նախարարության կրած վնասներն այն ծավալով, որի մասով Պայմանագիրը լուծվել է:

9.3 Կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Նախարարությունը հրապարակում է իր պաշտոնական ինտերնետային կայքէջում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

Կազմակերպությունը, Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը պետական մարմինը այն ուղարկվում է նաև Կազմակերպության էլեկտրոնային փոստին:

9.4 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.5. Պայմանագիրը կնքվում է Պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

9.6 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ներքին գործերի նախարարություն
ք. Երևան,Նալբանդյան 130$_2$

Գ/Հ 900011042471
ՀՎՀՀ 02882913

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Տեսալուսանկարահանող էլեկտրոնային համակարգերի կառավարման կենտրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Զ. Քանաքեռցու 74
Հեռ. +(374) 60 851017

Գ/Հ 900018009291
ՀՎՀՀ 01043214

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 1
2026թ. հունվարի ____ -ին
կնքված N _____ պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ/ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ

Դրամաշնորհի միջոցների հաշվին իրականացվող Ծրագրի

N	Անվանումը	Նկարագիրը	Կազմակերպության կողմից կատարման ենթակա գործողությունները	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Միջոցառման իրականացման վերջնաժամկետը	Հաշվետվության ներկայացման կարգն ու ժամկետը	Պահանջվող գումարը (հազ.դրամ)
1.	«Տեսալուսանկարահանող էլեկտրոնային համակարգերի կառավարման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրական գործառույթների իրականացում	Ճանապարհային երթևեկության անվտանգության բնագավառում վարչական իրավախախտումների ամրագրում և վարչական իրավախախտումների վերաբերյալ որոշումների նախագծերի պատրաստում	1.տեխնիկական միջոցների (տեսախցիկների, ֆոտոխցիկների, արագաչափ սարքերի և այլն) շահագործումը և սպասարկումը, 2.տեխնիկական միջոցների (տեսախցիկների, ֆոտոխցիկների, արագաչափ սարքերի և այլն) արդիականացումը, 3. ծրագրային ապահովումը, 4.տեխնիկական միջոցների (տեսախցիկների, ֆոտոխցիկների, արագաչափ սարքերի և այլն)անխափան կապի ապահովումը, 5.աշխատակիցների աշխատանքային պայմանների և կարիքների բավարարումը:	179 արագության չափման դիտակետերում և Երևան քաղաքի 145 դիտարկվող տարածքներում ճանապարհային երթևեկության անվտանգության կանոնների խախտումների հայտնաբերում և վարչական իրավախախտումների վերաբերյալ որոշումների նախագծերի պատրաստում:	Շարունակական, տարվա ընթացքում	1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներին հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ ամփոփ հաշվետվությունը՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա հունվարի 10-ը: Հաշվետվությունները պարունակելու են սույն հավելվածի ակնկալվող արդյունքների փաստացի կատարողականի վերաբերյալ տեղեկատվություն:	3,082,000.0
	Ընդամենը						3,082,000.0

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ներքին գործերի նախարարություն
ք. Երևան,Նալբանդյան 130շ
Գ/Հ 900011042471
ՀԿՀՀ 02882913
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Տեսալուսանկարահանող էլեկտրոնային համակարգերի կառավարման կենտրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Զ. Քանաքեռցու 74
Հեռ. +(374) 60 851017
Գ/Հ 900018009291
ՀԿՀՀ 01043214
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
2026թ. հունվարի ____ -ին
կնքված N _____ պայմանագրի

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

«Տեսալուսանկարահանող էլեկտրոնային համակարգերի կառավարման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը (այսուհետ՝ Կազմակերպություն) 2026թ.-ի ՀՀ պետական բյուջեի «1234. Ներքին գործերի նախարարության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումներ, մոնիտորինգ և վերահսկողություն» ծրագրի իրականացման

1. Բովանդակություն

Կազմակերպության գործունեության առարկաներից է տեխնիկական միջոցների (տեսախցիկներ, ֆոտոխցիկներ, արագաչափ սարքեր և այլն) օգտագործմամբ վարչական իրավախախտումներ ամրագրելը, ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի վարչական իրավախախտումների գործերով վարույթի նախապատրաստական աշխատանքներ իրականացնելը, իսկ այլ դեպքերում՝ լիազոր մարմնի պահանջով տեսալուսանկարահանող համակարգերով հավաքված տեղեկություններ օրենքով սահմանված կարգով տվյալ մարմնին տրամադրելը:

2. Ծրագրի նպատակը

Դրամաշնորհային ծրագրի իրականացման նպատակն է ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի վարչական իրավախախտումների ամրագրումը, վարույթների նախագծերի պատրաստումը և տրամադրումը: Կազմակերպությունը դրամաշնորհային ծրագրի շրջանակներում իրականացնելու է հետևյալ գործողությունները՝

1. տեխնիկական միջոցների շահագործումը և սպասարկումը,
2. տեխնիկական միջոցների արդիականացումը,
3. ծրագրային ապահովումը,
4. տեխնիկական միջոցների անխափան կապի ապահովումը,
5. աշխատակիցների աշխատանքային պայմանների և կարիքների բավարարումը:

- Տեխնիկական միջոցների (տեսախցիկներ, ֆոտոխցիկներ, արագաչափ սարքեր և այլն) շահագործումը և սպասարկումը իրենից ներկայացնում է Կազմակերպության աշխատակիցների կողմից տեխնիկական միջոցների օգտագործմամբ վարչական իրավախախտումների ամրագրումը, ճանապարհային երթևեկության անվտանգության կանոնները խախտած տրանսպորտային միջոց շահագործողների և (կամ) սեփականատերերի նկատմամբ վարչական իրավախախտումների վարույթի

որոշումների նախագծերի նախապատրաստումը և ներկայացումը ՀՀ ներքին գործերի նախարարության համապատասխան ստորաբաժանում: Գործընթացի ապահովման նպատակով տեխնիկական միջոցները շուրջօրյա աշխատանքային ռեժիմով սպասարկվում են: Սպասարկումն իրականացվում է պրոֆիլակտիկ (օբյեկտիվի մաքրում, դիրքի կարգաբերում և այլն) և խափանումների դեպքում արագ արձագանքման միջոցով: Վերջինիս պարագայում անհապաղ կատարվում է ուսումնասիրություն և պարզվում խափանման պատճառը, որի արդյունքում տեղում վերացվում են խնդիրները կամ տեղափոխվում վերանորոգող կազմակերպություն անսարքությունները վերացնելու նպատակով: Անհրաժեշտության դեպքում, իրականացվելու են տեխնիկական միջոցների (տեսախցիկներ, ֆոտոխցիկներ, արագաչափ սարքեր և այլն) տեղադրումներ և տեղափոխություններ:

- Համակարգի անխափան աշխատանքի ապահովման նպատակով տեխնիկական միջոցների արդիականացումն իրականացվելու է տեսալուսանկարահանող սարքերի, ծրագրային ապահովման, սերվերների սպասարկումն իրականացնող կազմակերպությունների, ինչպես նաև Կազմակերպության իրավասու աշխատակիցների առաջարկությունների հիման վրա: Վերջինս իրենից ենթադրում է առկա տեխնիկական միջոցների ընթացիկ աշխատանքն ապահովվելու նպատակով անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերման և տեղադրման աշխատանքներ և ոչ թե ենթակառուցվածքի համակարգային փոփոխություն:
- Ծրագրային ապահովման նպատակն է Համակարգի գործունեության բոլոր փուլերում (արձանագրում, մշակում, խմբագրում, պահպանում, արխիվացում, ցուցադրում և այլն) գործող ծրագրային մոդուլների անխափան աշխատանքի ապահովվումը:
- Տեխնիկական միջոցների անխափան կապի ապահովման նպատակն է տեսալուսանկարահանող սարքավորումների, սերվերների, Կազմակերպության համապատասխան աշխատողների և լիազոր մարմնի միջև անխափան օպտիկական կամ բջջային կապի ապահովումը:
- Աշխատակիցների աշխատանքային պայմանների և կարիքների բավարարման նպատակով գնահատվելու են անհրաժեշտ ապրանքների և ծառայությունների տեսակները և կազմակերպվելու գնման գործընթացներ:

3. Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները ու մուտքերը

Կազմակերպությանը 2026թ. ՀՀ պետական բյուջեից հատկացվելու է 3,082,000.0 հազ. դրամ: Դրամաշնորհի շրջանակներում իրականացնելու են ընթացիկ և կապիտալ ծախսեր Կազմակերպության բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով: Ծախսերի ուղղությունները նախատեսվելու են Կազմակերպության նախահաշվով:

4. Ծրագրի կատարման կարգն ու ժամկետները

«Տեսալուսանկարայանող էլեկտրոնային համակարգերի կառավարման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը նշված ծրագիրը կատարելու է մինչև 31.12.2026թ-ը:

Կատարման կարգը սահմանվում է Պայմանագրով:

Ծրագրի հավելված 1

Աշխատանքային պլան
«Տեսալուսանկարահանող էլեկտրոնային համակարգերի կառավարման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 2026թ.

N	Բովանդակություն	Կատարման ժամկետ		Ծանոթություն
		սկիզբ	ավարտ	
	Հիմնական գործունեություն			
1.	տեխնիկական միջոցների շահագործումը և սպասարկումը	01 հունվար 2026թ.	31 դեկտեմբեր 2026թ	Կանոնադրական նպատակների իրականացում
2.	տեխնիկական միջոցների արդիականացումը	01 հունվար 2026թ.	31 դեկտեմբեր 2026թ	Կանոնադրական նպատակների իրականացում
3.	ծրագրային ապահովումը	01 հունվար 2026թ.	31 դեկտեմբեր 2026թ	Կանոնադրական նպատակների իրականացում
4.	տեխնիկական միջոցների անխափան կապի ապահովումը	01 հունվար 2026թ.	31 դեկտեմբեր 2026թ	Կանոնադրական նպատակների իրականացում
5.	աշխատակիցների աշխատանքային պայմանների և կարիքների բավարարումը	01 հունվար 2026թ.	31 դեկտեմբեր 2026թ	Կանոնադրական նպատակների իրականացում

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ներքին գործերի նախարարություն
ք. Երևան,Նալբանդյան 130շ

Գ/Հ 900011042471
ՀՎՀՀ 02882913

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Տեսալուսանկարահանող էլեկտրոնային համակարգերի կառավարման կենտրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Զ. Քանաքեռցու 74
Հեռ. +(374) 60 851017

Գ/Հ 900018009291
ՀՎՀՀ 01043214

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
2026 թ. հունվարի ____ -ին
կնքված N _____ պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

հազ. դրամ

Ձեռք բերվող ապրանքի, ծառայության անվանումը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակարգման հոդվածը	Միջոցառման կատարման դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
		I եռամսյակ			II եռամսյակ			III եռամսյակ			IV եռամսյակ			Ընդամենը
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
դրամաշնորհային ծրագիր	4637	770500.0	770500.0	770500.0	1541000.0	1541000.0	1541000.0	2311500.0	2311500.0	2311500.0	3082000.0	3082000.0	3082000.0	3082000.0

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ներքին գործերի նախարարություն
ք. Երևան,Նալբանդյան 130$_2$

Գ/Հ 900011042471
ՀԿՀՀ 02882913

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Տեսալուսանկարահանող էլեկտրոնային համակարգերի կառավարման կենտրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Զ.Քանաքեռցու 74
Հեռ. +(374) 60 851017

Գ/Հ 900018009291
ՀԿՀՀ 01043214

/ստորագրություն/
Կ.Տ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
«ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ»
07.01.2026 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան

«13» հունվար 2026թ.

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունը, ի դեմս ՀՀ ներքին գործերի նախարարարության գլխավոր քարտուղար Արա Ֆիդանյանի (այսուհետ՝ Նախարարություն), որը գործում է կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Տեսալուսանկարահանող էլեկտրոնային համակարգերի կառավարման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս տնօրեն Ա. Ավետիսյանի (այսուհետ՝ Կազմակերպություն), որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), որոշեցին Կողմերի միջև 2026 թվականի հունվարի 7-ին կնքված «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» թիվ 1 պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Պայմանագրում և Պայմանագրի հավելվածներում «Գ/Հ 900011042471» բառերը փոխարինել «Գ/Հ 900011061711» բառերով:
2. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:
3. Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:
4. Սույն համաձայնագիրը կազմված մեկ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ներքին գործերի նախարարություն
ք. Երևան,Նալբանդյան 130$_2$

Գ/Հ 900011061711
ՀՎՀՀ 02882913

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Տեսալուսանկարահանող էլեկտրոնային համակարգերի կառավարման կենտրոն»
ՊՈԱԿ
ք. Երևան, Զ. Քանաքեռցու 74

Գ/Հ 900018009291
ՀՎՀՀ 01043214

/ստորագրություն/
Կ.Տ